# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 49 - 50 (16546) ՇԱԲԱԹ, 24 ՀՈՒՆԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ



*Հունիսի 21-ին, Վրաստանի խորհրդարանն իր արտահերթ նիստում ձեռնամուխ եղավ Վրաստանի եւ Աջարիայի սահմանադրական փոփոխությունների նախագծի առաջին ընթերցմամբ քննարկմանը: Օրինանախագիծը պատգամավորներին ներկայացրեց խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:*

Երկրի օրենսդիր մարմնում սահմանադրական փոփոխությունների նախագծի քննարկումը սկսելու համար, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն խորհրդարանի արտահերթ նիստ նշանակելու դիմումով դիմել էր Վրաստանի նախագահ Գի-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՏԱԿԵՑՎՈՒՄ Է »

*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին երկրի խորհրդարանում սահմանադրական փոփոխությունների օրինանախագծի քննարկման կապակցությամբ հանդես եկավ ներկայացված փոփոխությունների գնահատմամբ:*



Նրա խոսքով, սահմանադրական հանձնաժողովի կողմից մշակված փոփոխություններով հավասարակշռվում եւ հստակ բաշխվում է պատասխանատվությունն իշխանության ուժերի միջեւ:

«2010 թվականին երկրում անցկացված սահմանադրական փոփոխությունների արդյունքում, երկիրը ստացավ սահմանադրություն, որտեղ ընդունվել էին սահմանադրական տրամաբանության նորմերի համար անընդունելի դրույթներ եւ հենց այդ թերացումների վերացման, հավասարակշռված սահմանադրության ձեւավորման եւ խորհրդարանական լիարժեք մոդելի անցման նպատակով, մեր թիմի կողմից նախաձեռնվեց սահմանադրական փոփոխությունների մշակումը: Այդ նպատակով հիմնվեց սահմանադրական հանձնաժողով, որի կազմ ներգրավվեցին քաղաքագետներ, ոչ կառավարական կազմակերպություններ եւ անկախ փորձագետներ: Հանձնաժողովի շրջանակներում, ցանկացած անդամ կարող է ներկայացնել իր փաստարկները եւ մասնակցել սահմանադրական փոփոխությունների ձեւավորման գործընթացին: Իսկ սահմանադրությունում նորմերի գրանցման

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

## «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

*Հունիսի 19-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց dcfta.gov.ge կայքէջի շնորհանդեսին:*

Ելույթ ունենալով միջոցառմանը, վարչապետը հայտարարեց, որ եվրոպական ինտեգրումը երկրի ժողովրդի ընտրությունն է, եւ այն օգուտ ու բարեկեցություն է բերելու բոլոր քաղաքացիներին: 2014 թվականին Եվրամիության հետ ձեւակերպված ասոցիացման համաձայնագիրը նոր մակարդակի բարձրացրեց տարբեր ոլորտներում Վրաստանի եւ Եվրամիության միջեւ առկա համագործակցությունը: Նրա խոսքով, երկրի բնակչության համար անայցեգրային պայմանակարգի հաստատումը որոշակի հնարավորություններ բացեց, ինչը հանդիսանում է ազատ առեւտրի բաղկացուցիչ մասը: «Ազատ տեղափոխություններն այսօր փոքր եւ միջին գործարարներին թույլ են տալիս առավելագույն տեղեկատվություն ստանալ եվրոպական շուկայի հնարավորությունների մասին, եւ առավելագույն անմիջական կա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ

## ԿՆՊԱՍՏԻ՞, ԱՐԴՅՈՔ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ

*Հունիսի 18-ին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Մցխեթա-Թբիլիսիի արքեպիսկոպոս, Պիցունդայի Ցխում-Աբխազեթիի միտրոպոլիտ, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդը Թբիլիսիում, Սուրբ Երրորդության տաճարում, քարոզի ժամանակ հայտարարեց, որ Վրաստանը հնագույն միապետություն է, ուստի սահմանադրական միապետությունը կկայունացնի երկրի իրավիճակը:*

- Վրաստանը հնագույն երկիր է, հնագույն մշակույթով: Գուցե հարկ է մտածել այն մասին, թե ով էինք նախկինում, ով ենք այսօր եւ ով կլինենք վաղը: Գուցե պետք է մտածել, որ Վրաստանը հնագույն միապետություն է: Աստծո օրհնությամբ մեզ ղեկավարում էր թագավորը: Այսօր աշխարհում հաճախ են դեպքերը, երբ կոչվում են միապետական, թագավորում են, սակայն՝ չեն կառավարում: Դա կոչվում է սահմանադրական միապետություն, եւ այն երկրին կայունություն է բերում: Բնականաբար, դա այսօր կամ վաղը տեղի չի ունենա, սակայն մենք պետք է վերլուծենք անցյալը, ներկան եւ ապագան,- հայտարարեց

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԻԱ ԿԱՆՉԵԼՈՒԻՆ

*Հունիսի 20-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Վրաստանի եւ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Գիա Կանչելու հետ, ով Հայաստանում էր գտնվում հունիսի 18-20-ը Երեւանում անցկացվող Կանչելուն նվիրված փառատոնին մասնակցելու նպատակով:*



Հանդիպմանը Հայաստանի նախագահը նշեց, որ Հայաստանում շատ սիրում ու բարձր են գնահատում Գիա Կանչելու արվեստը, ինչի վկայությունն է նրան նվիրված երեւանյան փառատոնը: Սերժ Սարգսյանն ընդգծեց, որ Հայաստանում մշտապես ուրախ են հյուրընկալելու ճանաչված կոմպոզիտորին, ով իր մեծ ներդրումն ունի հայ եւ վրացի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Իր հերթին, Գիա Կանչելին նշեց, որ իր ստեղծագործական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՋՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ»

*Հայաստանի տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը համոզված է, որ Հայաստան-Վրաստան Արեւելյան գործընկերության տարածքային համագործակցության (ԱԳՏՀ) ծրագիրը հաջող շարունակություն կունենա:*



Այս մասին հունիսի 16-ին կայացած մամլո ասուլիսի ժամանակ նշեց Վաչե Տերտերյանը, ներկայացնելով այն դրական տեղաշարժը, որ արձանագրվել է Հայաստան-Վրաստան սահմանային համայնքներում իրականացվող ծրագրերի շնորհիվ: «Մենք ենթադրում ենք, որ ծրագիրը շարունակություն կունենա երկու պատճառով. նախ, որ ծրագրերն իրենց մեջ ունեն շարունակականության տարր, բայց, այս պարագայում, մենք ոչ միայն պետք է դիտարկենք դա տեղի սահմանումով, այլ պետք է փորձենք այդ փորձը կիրառել ավելի շատ տարածքներում եւ եկամտաբեր գործունեություն ծավալել: Ավելի ոգեւորված ենք, քանի որ այս ծրագրերում ավելի շատ ներգրավված են երիտասարդներ, ինչը ապագայի հանդեպ լավատեսության մեծ հույս է տալիս»,- նշեց Վաչե Տերտեր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

*Հունիսի 21-ին Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Յանոշ Հերմանի հետ:*

Հանդիպմանը կողմերը մտքեր փոխանակեցին հունիսի 19-ին Լյուքսեմբուրգում անցկացված «Արեւելյան գործընկերության» մինիստերիալի որոշումների կապակցությամբ, քննարկեցին Վրաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության հրատապ հարցերն ու ընթացիկ տարվա նոյեմբերի 24-ին ծրագրված «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովի անցկացման հարցերը:

Կողմերը ողջունեցին Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի իրականացման գործընթացում Վրաստանի առաջընթացը, առանձնակի ընդգծվեց այն փաստը, որ Եվրամիությունը Վրաստանը ներառել է այն երեք երկրների ցուցակում, որոնց թույլ է տրվել եվրոպական շուկա արտահանել Սեւծովյան ձկնամթերքները:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պեր ստեղծել, դնել եվրոպական գործարարների հետ համագործակցության հիմքերը: Սա տեղեկատվական նշանակալի հարթակ է: Բոլորին ցանկանում եմ ակտիվության կոչ անել, միաժամանակ, իրականացնել այն կարեւորագույն բարեփոխումները, որոնք մեր երկիրը կդարձնեն առավել եվրոպական, իսկ մեր բիզնեսմիջավայրը եւ մեր գործարարներին՝ առավել մրցունակ»,- հայտարարեց Կվիրիկաշվիլին:

Նրա խոսքով, կառավարող թիմի գլխավոր նպատակը հանդիսանում է ասոցիացման մասին համաձայնագրի արդյունավետ իրականացումը, ինչը նպաստում է եվրոպական չափորոշիչների եւ նորմերի ներդրմանը, երկրի քաղաքացիների կենսամակարդակի բարձրացմանը, տնտեսական աճի ու ժողովրդավարական սկզբունքների հետագա ամրապնդմանը, համապատասխան հիմքերի ստեղծմանը: «Որպեսզի երկիրը առավելագույն օգուտ ստանա համաձայնագրի իրականացման արդյունքում, կարեւոր է բարձրացնել հասարակայնության լայն խավերի տեղեկատվության մակարդակը: Հենց այդ նպատակով էլ հիմնվել է այս տեղեկատվական կայքէջը, որտեղ կիավաքվի ողջ տեղեկատվությունը DCFTA-ի վերաբերյալ»,- նշեց Գիորգի Կվիրիկաշվիլին:





ԱՄՆ-ՈՒԿՐԱԻՆԱ

## ԿԱՅԱՑԵԼ Է ԹՐԱՄՓ-ՊՈՐՈՇԵՆԿՈ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

*Վաշինգտոնում տեղի ունեցավ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի եւ Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոյի հանդիպումը:*

*Ինչպես հանդիպման ավարտից հետո հայտարարեց Ուկրաինայի նախագահը, Թրամփի հետ բանակցությունները եղել են մանրամասն ու լիարժեք:*

*Ամերիկյան կողմը Ուկրաինային աննախընթաց օգնություն խոստացավ:*

*ԱՄՆ չի բացառում, որ Ուկրաինային կփոխանցի հզոր զինատեսակներ: «Մենք ամուր աջակցություն ենք ստացել ԱՄՆ-ի կողմից՝ մեր երկրի սուվերենության, տարածքային ամբողջականության եւ անկախության, ինչպես նաեւ Ուկրաինայում բարեփոխումները շարունակելու համար»,- ասաց Ուկրաինայի առաջնորդը:*

ԳԵՐՄԱՆԻԱ

## ՄԱՀԱՑԵԼ Է ՆԱԽԿԻՆ ԿԱՆՑԼԵՐ ՀԵԼՄՈՒՏ ԿՈԼԸ

*87 տարեկան հասակում կյանքից հեռացել է Գերմանիայի նախկին կանցլեր Հելմուտ Կոլը: Նա մահացել է Գերմանիայի արեւմուտքում գտնվող Ռինլանդ-Պալատինատե նահանգի Լյուդվիգսհաֆեն բնակավայրում գտնվող իր տանը:*

*Կոլը համարվում է Գերմանիայի վերամիավորման ճարտարապետներից մեկը: 1982-1998 թվականներին՝ 16 տարի նա գլխավորել է Գերմանիայի կառավարությունը: Այս ընթացքում միավորվել են Արեւելյան եւ Արեւմտյան Գերմանիաները, փլուզվել է Բեռլինի պատը: Կոլը գլխավորել է աջ կենտրոնամետ Գերմանիայի Քրիստոնեադեմոկրատական կուսակցությունը: Նա 20-րդ դարի Գերմանիայի ամենաերկար կառավարած կանցլերն է:*

ՖՐԱՆՍԻԱ

## ՄԱԿՐՈՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԵՑ

*Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի «Առաջ, հանրապետություն» կուսակցությունը, դաշնակիցների հետ միասին, բացարձակ մեծամասնություն է նվաճել երկրի խորհրդարանի ստորին պալատում:*

*Այսպես, վերջնական արդյունքների համաձայն, այդ կուսակցությունն ունի 308 տեղ խորհրդարանի 577-տեղանոց ստորին պալատում, «Դեմոկրատական շարժումից» նրա կենտրոնամետ դաշնակիցները կունենան 42 տեղ: Խորհրդարանում գլխավոր ընդդիմադիր ուժը կլինեն «Հանրապետականներից» աջերը (113 տեղ)՝ «Դեմոկրատների եւ անկախների դաշինքից» կենտրոնամետ աջերի (18 տեղ) հետ միասին: Բացի այդ, եւս վեց տեղ ունեն աջերի այն ներկայացուցիչները, որոնք «Հանրապետականների» կազմում չեն:*

ԻՐԱՔ

## ՊԱՅԹԵՑՎԵԼ Է ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԶԿԻԹԸ

*«Իսլամական պետություն» (ԻՊ) ահաբեկչական խմբավորման զինյալներն Իրաքի Մոսուլ քաղաքում պայթեցրել են «Ան Նուրի» պատմական մզկիթը, որտեղ 2014 թվականին ԻՊ-ի պարագլուխ Աբու Բաքր ալ Բաղդադին հայտարարեց «խալիֆաթ» ստեղծելու մասին: Իրաքի հրամանատարության հրապարակած լուսանկարների համաձայն՝ XII դարի սկզբի կառույցն ամբողջովին ոչնչացված է:*

*Ըստ ստացված տեղեկատվության՝ զինյալները համալիրն ականապատել եւ պայթեցրել են այն բանից հետո, երբ Իրաքի բանակի հակաահաբեկչական ստորաբաժանումներն ընդհուպ մոտեցել են «Ան Նուրի» մզկիթին:*

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ



***Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, հունիսի 16-ին, հանդիպում է ունեցել Եվրամիության գենդերային հարցերով արտաքին գործունեության ծառայության գլխավոր խորհրդական Մարա Մարինակի եւ Եվրամիության դիտորդական առաքելության ղեկավար Կեստուտիս Յանկաուսկասի հետ:***

Կողմերը քննարկել են բռնազավթված տարածքներում եւ բաժանման գծի երկայնքով ստեղծված իրավիճակի հարցը:

Հանդիպմանը պետնախարարը խոսել է Աբխազիայում եւ Ցխինվալիի տարածաշրջանում կանանց իրավունքների խախտումների եւ հակամարտությունների կարգավորման ու ժողովուրդների միջեւ վստահության վերականգնման, Վրաստանի կառավարության կողմից ձեռնարկված քայլերի մասին:

Հանդիպմանն ընդգծվել է քաղաքական եւ հասարակական գործընթացներում, այդ թվում՝ նաեւ խաղաղարարական գործընթացում կանանց մասնակցության կարեւորությունը:

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

***Հունիսի 16-ին, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հանդիպում է ունեցել գենդերային հարցերով օտարերկրյա գործունեությունների ծառայության եվրոպական դեսպան Մարա Մարինակի հետ:***



Հանդիպմանը ներկա էր նաեւ Վրաստանում Եվրամիության փոխդեսպան Կարլո Նատալիեն:

Կողմերը քննարկել են այն օրենսդրական նախագիծը, որն առնչվում է կանանց իրավունքներին եւ կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխմանը, օրինանախագիծ, որը մշակվել էր կանանց նկատմամբ բռնության դեմ Ստամբուլի հռչակագրի պահանջներին համապատասխան:

Արդարադատության նախարարության կողմից մշակված օրինափաթեթը փոփոխություններ է կատարելու շուրջ 20 օրենքներում: Թեա Ծուլուկիանին պատմեց տեղեկատվական այն քարոզարշավի մասին, որի նպատակն է՝ մանրամասն տեղեկատվություն հանձնել բնակչության լայն խավերին: Քարոզարշավի անցկացման համար տարվում են մասնագիտական վարժանքներ: Ներկա դրությամբ, ավելի քան 200 կամավորներ անցել են վարժանքներ, ծրագրվում է եւս 500-ի նախապատրաստումը: Ինչպես նշեց արդարադատության նախարարը, քարոզարշավի շրջանակներում, հանդիպումներ են անցկացվում համալսարաններում եւ ուսումնական մյուս հաստատություններում: Հեռուստատեսությամբ ցուցադրվում են արդարադատության նախարարության կողմից պատրաստված երեք տեսահոլովակները:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԻԱ ԿԱՆՉԵԼՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գործունեության մի զգալի ժամանակահատված ուղղակիորեն կապված է Հայաստանի հետ՝ իր յոթ սիմֆոնիաներից վեցը գրել է Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տանը եւ այդ առիթով երկար ժամանակ է անցկացրել Հայաստանում՝ ձեռք բերելով անկրկնելի ընկերներ հայ կոմպոզիտորների շրջանում: Անվանի մտավորականը ջերմությամբ է հիշել նրանց հետ հանդիպումներն ու շփումները՝ ընդգծելով, որ դրանցով մինչ այսօր հպարտանում է:

Նշելով, որ հայ-վրացական հարաբերություններն այսօր գտնվում են բավական բարձր մակարդակի վրա, տարեցտարի առավել ամրապնդվում եւ խորանում են բարիդրացիական կապերը երկու ժողովուրդների միջեւ, զրուցակիցները համակարծիք են եղել, որ անհրաժեշտ է ավագ սերնդի ներկայացուցիչների, այդ թվում՝ անվանի մարդկանց մեծ բարեկամության օրինակների վրա շարունակել կրթել ու դաստիարակել երիտասարդ սերունդները՝ խրախուսելով ակտիվ շփումներ մշակույթի ոլորտում:

# ՎԱՉԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՋՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յանը՝ փաստելով, որ երկու երկրների կառավարությունների համապատասխան ստորաբաժանումները դիմելու են Եվրամիությանը, որպեսզի նման ծրագրերը, որոնք բազմամշակութային, հարեւանության, շփման եւ զարգացման մեծ հնարավորություններ ունեն, շարունակվեն:

«Ոչ վաղ անցյալում հայ-վրացական նման շփումներն այնքան նորմալ էին, որ չէինք նկատում, իսկ հիմա նույնիսկ մանր տեղաշարժերն ուրախացնում են: Մենք պետք է գանք այն վիճակին, որ մշակութային եւ տնտեսական շփումները դառնան ամենօրյա»,- ասաց Վաչե Տերտերյանը:

Հայաստան-Վրաստան Արեւելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրի շրջանակում իրականացվող համագործակցության ծրագրերի շարունականությունը նաեւ Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ Իրակլի Մատկավան է ակնկալում: «Ծրագրերում ներառված համայնքներն արդեն տեսնում են դրանք, չնայած փոքր, բայց տեսանելի ու շոշափելի արդյունքների. սահմանի երկու կողմերում ստեղծվել են կենցաղային թափոնների կառավարման համակարգեր, մշակված է զբոսաշրջային երթուղիներ, ձեռք են բերվել առեւտրային նոր գործընկերներ եւ այլն: Շահառու կազմակերպությունները ձեռք բերեցին նաեւ անգնահատելի փորձ: Դրանց գումարվում է նաեւ համայնքների բարեկեցությունը: Ծրագիրն ապացուցեց, որ սերտ համագործակցությունը եւ հաստատված մտերիմ հարաբերությունները այն ուղին է, որ տանում է ընդհանուր խնդիրների լուծմանը եւ փոխշահավետ ձեռքբերումների արձանագրմանը: Այս փոքր ծրագրերի հաջողությունները մղում են մեզ առավել մեծ գործերի»,- ասուլիսի ժամանակ ընդգծեց Վրաստանի տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարի առաջին տեղակալ Իրակլի Մատկավան:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

## ՔՆՆԱՐԿՎԵՑ ԱՋԱՐԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ

*Վրաստանի խորհրդանն առաջին ընթերցմամբ քննարկեց Աջարիայի Ինքնավար Հանրապետության մասին սահմանադրական օրենքի նախագիծը:*

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, ներկայիս սահմանադրական օրենքը նշանակալի թերացումներ ունի ինչպես բովանդակային, այնպես էլ՝ տեխնիկական տեսանկյունից եւ չի ապահովում պետության, ինքնավար հանրապետության եւ ինքնակառավարման միավորների միջեւ լիազորությունների հստակ եւ հուսալի բաժանումը:

Սահմանադրական նոր նախագիծը չի փոխում կարգավիճակի սահմանման, Աջարիայի Ինքնավար Հանրապետության լիազորությունների եւ ինստիտուցիոնալ կարգի սկզբունքները:

Աջարիայի Ինքնավար Հանրապետության մասին սահմանադրական օրենքի նախագծի քննարկմանն ու քվեարկությանը Վրաստանի խորհրդարանական ընդդիմությունը չմասնակցեց:



### ՎԱՑԼԱՎ ՀԱՎԵԼԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Հունիսի 23-ին Թբիլիսիի Վակեի շրջանի մունիցիպալիտետի շենքի հարեւանությամբ պուրակում բացվեց Չեխիայի առաջին նախագահ Վացլավ Հավելի հուշարձանը:*

*Բացման արարողությանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Չեխիայի պաշտպանության նախարար Մարտին Ստրոպնիցկին:*

*Հուշարձանի հեղինակն է վրաց քանդակագործ Ջումբեր Ջիքիան:*

### ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՏԵՍՏԱՏՆԵՐ

*Ինչպես տեղեկացրել է պետական սպասարկումների զարգացման գործակալությունը, հունիսի 21-ից հանրային դպրոցների շուրջ 39 հազար շրջանավարտներ կկարողանան անվճար ստանալ ատեստատները՝ դիմելով Արդարադատության տներին, գործակալության մասնաճյուղերին եւ հասարակական կենտրոններին: Դիմորդները լրացնելու են համապատասխան հայցը, որից հետո ատեստատը կստանան տասը օրվա ընթացքում:*

*Հայցը կարելի է ներկայացնել մինչեւ դեկտեմբերի 31-ը: 2018 թվականին կհանձնվեն ատեստատի պատճենները: Արագացված կարգով ատեստատի ստացման համար սահմանվել են հետեւյալ սակագները՝ մեկ օրում 50 լարի, երկու օրում՝ 40 լարի, երեք օրում՝ 30 լարի, հինգ օրում՝ 20 լարի:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

**(23 Հունիսի)**

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.39 | 2.435 |
| ԵՎՐՈ | 2.643 | 2.743 |
| ՌՈՒԲԼԻ | 0.038 | 0.044 |
| ԴՐԱՄ | 0.0038 | 0.0054 |

*Հունիսի 16-ի համեմատ, դոլարի կուրսը աճել է 0.005 լարիով:*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳ

## ԿՆՊԱՍՏԻ՞, ԱՐԴՅՈՔ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Երանաշնորհը:

Մեկնաբանելով կիրակնօրյա քարոզում, Կաթողիկոս-Պատրիարքի կողմից բարձրացված սահմանադրական միապետության թեման, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, շնորհակալություն հայտնելով Պատրիարքին, երկրի ապագայի հանդեպ մտահոգության համար, հայտարարեց, որ սահմանադրական փոփոխությունների հետ կապված Կաթողիկոսի հայտարարությունը ճիշտ չէ: «Այդ երկու հարցերի միջեւ ոչ մի կապ գոյություն չունի: Սահմանադրական փոփոխությունները, որի շուրջ մենք աշխատում ենք, շատ կարեւոր են եւ առաջընթաց քայլ են երկրի ժողովրդավարական զարգացման ճանապարհին: Ինչ վերաբերում է Պատրիարքի հայտարարությանը, ապա, կարծում եմ, որ այդ հարցը, ինչպես եւ ասաց նա, այսօրվա ու վաղվա թեմա չէ: Այդ հարցի լուծման համար կպահանջվեն տասնամյակներ, գուցեեւ՝ ավելին: Այսօր դա չի քննարկվում, սակայն այդ հայտարարությունը բավականին հետաքրքիր է եւ, ըստ իս, դրական, որպեսզի այն քննարկվի լայն հասարակայնության մասնակցությամբ»:

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Էկա Բեսելիան, բացառված չէ, որ սահմանադրական միապետության հարցով անցկացվի հանրաքվե: «Մենք պետք է չբացառենք բնակչության հարցման ոչ մի հնարավորություն: Եթե խոսում ենք առաջիկայում սպասվող սահմանադրական կարգի փոփոխությունների մասին, ապա նման նշանակալի որոշումն ընդունելու է ժողովուրդը»,- ընդգծեց Բեսելիան: Իր հերթին, կոնստիտուցիոնալիստ Վախթանգ Խմալաձեն համաձայն չէ Վրաստանում սահմանադրական միապետության ստեղծման գաղափարի հետ, հայտարարելով, որ դա տարաձայնություններ կառաջացնի երկիրը կառավարող անձի շուրջ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

***Կայացավ գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) կողմից ֆինանսավորվող AMMAR նախագծի դրամաշնորհային ծրագրի նոր շնորհանդեսը, որին մասնակցեց գյուղատնտեսության առաջին փոխնախարար Նոդար Կերեսելիձեն:***



Վերոնշյալ նախագծի համար, Դանիայի կառավարությունը լրացուցիչ կարգով Վրաստանին հատկացրել է շուրջ 5 միլիոն դոլար: Նախագծի նպատակն է՝ բարձրացնել գյուղատնտեսական արտադրության մեջ երիտասարդության մասնակցության մակարդակը:

Ինչպես նշեց Վրաստանում նախագծի ղեկավար Դինա Սալեխը, ծրագրի բենեֆիցարներ կարող են դառնալ գյուղում ապրող մինչեւ 40 տարեկան կանայք եւ մինչեւ 35 տարեկան տղամարդիկ: Ծրագրին կարող են մասնակցել նաեւ գյուղական կոոպերատիվները եւ իրավաբանական անձինք, որոնց հիմնադիրները պատասխանում են վերոնշյալ տարիքային պահանջներին:

Նախագիծը նախատեսում է բենեֆիցարներին օգնության ցուցաբերում բիզնես ծրագրերի մշակման հարցում: Բիզնես ծրագրերի քննարկումից հետո մասնակիցներից յուրաքանչյուրը կստանա 25 հազար դոլարը չգերազանցող ֆինանսավորում: Ֆինանսավորումը նախատեսում է 40 տոկոսի դրամաշնորհ եւ բենեֆիցարի 60 տոկոսի համաֆինանսավորում:

ՀՐԱՏԱՊ

## ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԿԳՆԱՀԱՏՎԵՆ 100 ՄԻԱՎՈՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանն ընդունել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որն առնչվում է ճանապարհային երթեւեկության կանոնների խստացմանը: «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքի 2015 թվականի փոփոխությունները Վրաստանի խորհրդարանը վերջնականապես ընդունել է ընթացիկ տարվա ապրիլին:***

Ներկայացված փոփոխությունները նախատեսում են ընթացիկ տարվա հուլիսի 1-ից տուգանքների ավելացում, գաղտնի պարեկություն, ինչպես նաեւ՝ ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման գնահատման 100 միավորի համակարգի ներդնում:

Ամեն տարի վարորդական վկայականի վրա կհաշվարկվի 100 միավոր, որը հետագայում կկրճատվեն համապատասխան խախտման համար հատկացված միավորների քանակությամբ: Եթե վարորդը կատարում է 100 միավորի խախտում, ապա, նա զրկվում է վարորդական իրավունքից:

Ստորեւ ներկայացնում ենք գործնականում բոլոր հնարավոր խախտումների եւ դրանց տուգանային միավորների ցուցակը:

Ալկոհոլի ազդեցության տակ մեքենա վարելը՝ 30 միավոր:

Ալկոհոլի ազդեցության տակ մեքենան վարելու խախտման կրկնությունը՝ 40 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարման փոխանցումը այն անձին, որը գտնվում է ալկոհոլի ազդեցության տակ՝ 40 միավոր:

Անվտանգության գոտու անտեսումը վարորդի կամ առջեւի նստարանի ուղեւորի կողմից՝ 5 միավոր:

Մեքենան վարելիս բջջային հեռախոսով խոսելը՝ 15 միավոր:

Մոտոցիկլի կամ մոպեդի վարորդի կամ ուղեւորի հատուկ սաղավարտի բացակայությունը՝ 5 միավոր:

Վնասակար նյութերի ծավալը գերազանցող արտաթորված գազով տրանսպորտային միջոցի վարումը՝ 10 միավոր:

Տրանսպորտային միջոցի վարումը, որտեղ կարգավորված չէ արգելակման համակարգը, ղեկի կառավարման մեխանիզմը կամ կցիչը, կամ շարքից դուրս են եկել լապտերները, գիշերվա ժամերին եւ տեւի գաբարիտային լույսերը կամ ծյան կամ անձրեւի ժամանակ ավտոմեքենայի ապակեմաքրիչները կամ խախտված է շարժիչի սնուցման հերմետիկ համակարգը՝ 5 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումը, որտեղ տնայնագործականորեն վերափոխված է վառելանյութի տարողությունը կամ տեղադրված է բնական գազի համակարգը կամ այլ կերպով փոխվել է տրանսպորտի միջոցի կառուցվածքը, եւ դա չի համապատասխանում անվտանգության ապահովման պահանջներին՝ 10 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումն այն անձի կողմից, ով չունի համապատասխան կատեգորիայի վարորդական վկայական՝ 15 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումը մգացված ապակիներով՝ 5 միավոր:

Մգացված ապակիներով տրանսպորտային միջոցի կառավարման կրկնական խախտումը՝ 10 միավոր:

Մգացված ապակիներով տրանսպորտային միջոցի կառավարման տարվա ընթացքում երրորդ եւ հաջորդ խախտումների՝ 15 միավոր:

Վերոնշյալ խախտումները, որոնք հանգեցնում են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային եւ այլ կառույցի, ինչպես նաեւ գույքի եւ մարդու մարմնի վնասվածքի՝ 20 միավոր:

Տրանսպորտային միջոցի վրա լույսի առկայծման կամ ձայնային ազդանշանի կամ հատուկ բարձրախոսի հատուկ սարքերի տեղադրման, Վրաստանի ՆԳՆ-ի կողմից սահմանված կարգի խախտմամբ օպերատիվ կամ հատուկ ծառայությունների տրանսպորտային միջոցների համար նախատեսված գունաերանգների օգտագործման համար՝ 15 միավոր:

Վերոնշյալ իրավախախտումների կրկնական կատարման համար՝ 20 միավոր:

Տրանսպորտային այն միջոցների երթեւեկության արգելակումը, որոնք ընթանում են միացված հատուկ ազդանշանով կամ իրականացնում են պատվո պահակ կամ ուղեկցում, բացառությամբ շտապ օգնության կամ փրկարար ծառայության տրանսպորտային միջոցների՝ 10 միավոր:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

# ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որգի Մարգվելաշվիլուն: Երկրի նախագահը խորհրդարանականներին առաջարկեց վերանայել սահմանադրական նախագծի հիմնարար դրույթները եւ մշակել նոր տարբերակ, ուստիեւ հրաժարվեց նշանակել խորհրդարանի արտահերթ նիստ:

Խորհրդարանի աշխատակարգի 127-րդ հոդվածի համաձայն, այն դեպքում, եթե նախագահը հրաժարվում է նշանակել խորհրդարանի արտահերթ նիստ, օրենսդիր մարմինը իրավասու է դրան հաջորդած 48 ժամվա ընթացքում գումարել նիստ եւ քննարկել ծրագրված հարցերը:

Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ ընդունեց Վրաստանի սահմանադրության փոփոխությունները: Ներկայացված փոփոխությունների օգտին 150 պատգամավորներից, սահմանադրական փոփոխությունների համար անհրաժեշտ 113-ի փոխարեն՝ 115-ը քվեարկեցին կողմ: Խորհրդարանական ընդդիմության՝ «Հայրենասերների ալյանս» «Միասնական ազգային շարժում» եւ «Շարժում ազատության համար-եվրոպական Վրաստան»-ի պատգամավորները, ինչպես նաեւ ոչ կառավարական 16 կուսակցությունները, բոյկոտ հայտարարեցին:

Նշենք, որ այսօր խորհրդարանում անցկացվելու է նախագծի երկրորդ ընթերցմամբ քվեարկությունը, իսկ Սահմանադրության նախագծի վերջնական ընդունումը տեղի է ունենալու աշնանը:

Առաջին ընթերցման ընթացքում փոփոխությունների նախագիծը փոխվեց:

Առաջին, ամենակարեւոր, նորամուծությունը հանդիսանում էր սահմանադրությունում արված գրառումը, որ հողը չի կարելի վաճառել օտարերկրացիներին: Նախկինում սահմանադրության մեջ նման ոչինչ չկար: Եվս մի սահմանափակումը՝ ամուսնության նոր սահմանումն է: Նոր տարբերակով դա հանդիսանում է ոչ թե երկու մարդու միություն, այլ կնոջ եւ տղամարդու միություն: Բացի այդ, փոփոխության նախագծի համաձայն, արգելք է սահմանվում Վրաստանի քաղաքացիությունից զրկելու հարցում, որը ավտոմատորեն գործում էր երկրորդ քաղաքացիություն ստանալու դեպքում:

Սահմանադրության ներկայացված տարբերակը նախատեսում է վերացնել առանց հանրաքվեի նոր հարցերի սահմանման մասին արգելքը տասներկու տարի անց:

Ընդգծենք, որ հիմնական փոփոխությունները առնչվում են սահմանադրության քաղաքական հատվածին: Նախագծի համաձայն, Վրաստանը վերածվում է խորհրդարանական հանրապետության: Վրաստանի խորհրդարանը կընտրվի միայն համամասնական ընտրակարգով, կուսակցական ցուցակներով: Համապատասխանաբար, վերացվում է մեծամասնականների, երկրի շրջաններում անմիջականորեն ընտրված պատգամավորների ինստիտուտը: Թեպետ վերջին խորհրդատվություններից հետո, կառավարող կուսակցությունը մինչեւ 2024 թվականը հետաձգեց մեծամասնական ընտրակարգի վերացումը: Այսպիսով, խորհրդարանական հաջորդ ընտրությունները՝ 2020 թվականին կանցկացվեն ներկայիս գործող ընտրակարգով, ընդ որում՝ կուսակցություններին կարգելվի ընտրությունների ժամանակ միավորվել ընտրադաշինքներում:

Կուսակցությունների համար արգելագիծը պահպանվում է: Վրաստանի խորհրդարանում մանդատներ կստանան այն կուսակցությունները, որոնք ընտրություններին կհավաքեն ընտրողների ձայների առնվազն 5 տոկոսը: Նոր տարբերակում խորհրդարանի պատգամավորության թեկնածուի տարիքը 21-ի փոխարեն հասցվում է 25-ի:

Նախագծի համաձայն, փոխվում է խորհրդարանում տեղերի բաշխման սկզբունքը: Գործող համակարգով մանդատները, առաջին հերթին, կուսակցություններին տրվում են ստացած ձայների համապատասխան, իսկ մնացած մանդատները փոխանցվում են այն կուսակցություններին, որոնք խորհրդարանում տնօրինում են 6-ից քիչ տեղեր, որպեսզի դրանք կարողանան ստեղծել խմբակցություններ, իսկ մանդատների մյուս մասը, հերթականության սկզբունքով, բաժանվում է խորհրդարան մուտք գործած մյուս կուսակցությունների միջեւ: Նոր համակարգով կուսակցությունը, որը ստանում է ձայների մեծամասնությունը, ստանում է նաեւ խորհրդարանում չբաշխված բոլոր մանդատները, միայն այն դեպքում, եթե դրանց քանակությունը չի գերազանցում քվեարկության արդյունքում ստացած մանդատների 35 տոկոսին: Վերջին հաշվով, հաղթող կուսակցության կողմից ստացած մանդատները չպետք է գերազանցեն 89-ը: Մնացած չբաշխված մանդատները տրվելու են մյուս կուսակցություններին:

Բացի այդ, նախագծի համաձայն, փոխվում է խմբակցությունների ձեւավորման սկզբունքը: Ի տարբերություն ներկայում գործող տարբերակի, խորհրդարանում պետք է լինի այնքան խմբակցություն, որքան կուսակցություն: Ընդ որում, խմբակցությունում ընդգրկված թվով 6 թիվը անդամների դառնում է 7:

Փոխվում է նաեւ Վրաստանի նախագահի ընտրության կարգը: Եթե մինչ այդ, երկրի նախագահը քաղաքացիների կողմից ընտրվում էր անմիջական քվեարկությամբ, ապա, այսուհետեւ նրան կընտրեն 300 ընտրողները: Տվյալ պարագայում ընտրողները կլինեն երկրի խորհրդարանի պատգամավորները, Աբխազիայի (վտարանդիության մեջ) եւ Աջարիայի գերագույն խորհրդի բոլոր անդամները, ինչպես նաեւ երկրամասերի ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:

Այդ առումով բաց է մնում միայն սույն փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը: Դեռեւս չի հստակեցվել, դա կիրարկվելու է նախագահական 2018 թվականի ընտրություններին, թե հետաձգվելու է մինչեւ 2023 թվականը:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ*

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՍՏԱԿԵՑՎՈՒՄ Է »

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարցը որոշվում էր ձայների մեծամասնությամբ: Միաժամանակ, նշանակալից է այն, որ անցկացվեց աննախադեպ մասշտաբի համընդհանուր քննարկում, եւ երկրի բնակչությանը տրվեց փոփոխությունների վերաբերյալ իր դիրքորոշումը վավերացնելու հնարավորություն: Մշակված փոփոխությունները փորձաստուգման համար առաքվեցին Վենետիկի հանձնաժողովին, որտեղ դրանք ժողովրդավարության տեսանկյունից գնահատվեցին որպես առաջընթաց քայլ: Վերջնական արդյունքում սահմանադրական փոփոխություններով հավասարակշռվում եւ հստակ բաշխվում է պատասխանատվությունը իշխանության ճյուղերի միջեւ: Խորհրդարանը ձեռք է բերում իր բնական դերն ու կշիռը: Դյուրացվում է խորհրդարանի կողմից կառավարությանը անվստահություն հանձնելու կարգը: Կառավարությունը դառնում է առավել արդյունավետ, որպես չեզոք արբիտրի՝ առավել կոնկրետացվում են նախագահի գործառույթները: Բարձրացվում է մարդու, հասարակության պաշտպանության մակարդակը եւ սահմանադրության անցումային դրույթներում վավերացվում է երկրի արտաքին ընտրությունը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ այն գործընթացը, ուր ընդդիմությունը փորձում է համախմբել հասարակայնությանը, որպեսզի հակադրվի սահմանադրական փոփոխություններին, զուրկ է փաստավորումից: «Ուստի, ցանկանում եմ դիմել մեր հասարակությանը եւ խնդրել առավել լավ ընկալել ձեռքբերումների գինը, ընկալել, թե ինչ աշխատանքի արդյունք է այս ամենը, եւ հստակորեն տեսնել այն առաջընթացը, որին կհանգեցնեն սահմանադրական այս փոփոխությունները՝ իշխանության հավասարակշռության եւ երկրում ժողովրդավարության մակարդակի տեսանկյունից»,- ընդգծեց վարչապետը:

ՀՐԱՏԱՊ

# ՎԱՐՈՐԴՆԵՐԸ ԿԳՆԱՀԱՏՎԵՆ 100 ՄԻԱՎՈՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

Արգելակում են հատուկ ազդանշաններով բժշկական շտապ օգնության, հրշեջ փրկարար ծառայության կամ ոստիկանության տրանսպորտային միջոցների երթեւեկությունը՝ 20 միավոր:

Վերջին չորս իրավախախտումները, որոնք հանգեցնում են տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ կառույցի, ինչպես նաեւ գույքի եւ մարդու մարմնի վնասվածքի՝ 40 միավոր:

Ավտոմեքենայի վարելն անչափահասի (վարորդական վկայական ունեցողի բացառությամբ) կամ անձի կողմից, որը չունի վարորդական իրավունք՝ 15 միավոր:

Եթե դա հանգեցնում է տրանսպորտային միջոցի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ կառույցի, ինչպես նաեւ գույքի եւ մարդու մարմնի վնասվածքի՝ 25 միավոր:

Տարվա ընթացքում այդ իրավախախտման կրկնության դեպքում՝ 30 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումն առանց պետական համարանիշի կամ դրա փոփոխման՝ 10 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումը, որը սահմանված կարգով գրանցված չէ՝ 20 միավոր:

Տրանսպորտային միջոցի կառավարումը ուրիշի կամ քողարկված պետհամարանիշերով՝ 40 միավոր:

Ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից վարորդի փախուստը կամ մեքենայի տեղաշարժումը միջադեպի վայրից՝ 15 միավոր:

Ոստիկանի կողմից տրանսպորտային միջոցի կանգնեցման պահանջի չկատարումը՝ 25 միավոր:

Վերջին գործողությունը, որը հանգեցնում է վթարային իրավիճակի ստեղծմանը կամ արգելակում է ճանապարհային երթեւեկությունը՝ 35 միավոր:

15 կմ/ժամ արագությամբ գերազանցման համար՝ 10 միավոր:

Պարբերական միջքաղաքային տեղական կամ միջազգային բեռնափոխադրումներ կատարող վարորդի կողմից արագության գերազանցումը՝ 20 միավոր:

Վթարային իրավիճակի հանգեցնող արագության գերազանցումը՝ 25 միավոր:

Տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային կամ այլ կառույցի, ինչպես նաեւ գույքի եւ մարդու մարմնի վնասվածքի հանգեցրած արագության գերազանցումը՝ 40 միավոր:

Վարորդի կողմից հետիոտնի նկատմամբ ճանապարհային երթեւեկության կանոնի խախտումը, որը նախատեսված է «Ճանապարհային երթեւեկության մասին» օրենքի 25-րդ հոդվածով՝ 5 միավոր:

Հետիոտնի նկատմամբ ճանապարհային երթեւեկության օրենքի կրկնակի խախտումը՝ 10 միավոր:

Վարորդի կողմից ճանապարհային նշանի կամ ցուցիչների, բուքսիրացման, լամպերի օգտագործման, ձայնային ազդանշանի կամ վթարային լույսերի օգտագործման, ուսումնական երթեւեկության, բնակելի գոտում երթեւեկության կամ ճանապարհային երթեւեկության օրենքների խախտման, երթուղային տաքսիների երթեւեկության առաջնահերթության կամ բեռնատրանսպորտի երթեւեկության կանոնների խախտման կամ մոտոցիկլետներով կամ տրանսպորտային այլ միջոցներով խմբային շարժման մասնակցության համար, ինչն արգելակում է ճանապարհային երթեւեկությունը կամ սպառնում է երթեւեկության անվտանգությանը՝ 5 միավոր:



Տրանսպորտային միջոցներով ճանապարհի կազմակերպած շրջափակման կամ քաղաքում կամ բնակավայրում խմբային երթեւեկության մասնակցության համար եւ լրիվությամբ շրջափակվում է երթեւեկելի հատվածը՝ 10 միավոր:

Երթեւեկելի հատվածում տրանսպորտային միջոցի կանգնեցման, շարժումը սկսելու կամ խուսանավման կարգի խախտման համար՝ 10 միավոր: Տրանսպորտային միջոցի վրա ճանաչման նշանի ամրացման կարգի խախտման համար՝ 5 միավոր:

Առաջնահերթային կամ լուսակիրի արգելակող նշանի կամ կարգավորիչի պահանջի անտեսումը, շրջայցի կարգի խախտումը, խաչմերուկի կամ երկաթուղու անցման կարգի խախտումը, տրանսպորտային այն միջոցների շարժման արգելակումը՝ 10 միավոր:

Ճանապարհային հոծ գիծը խախտելու համար՝ 10 միավոր:

Տարվա ընթացքում ճանապարհային հոծ գծի կրկնակի խախտումը՝ 20 միավոր:

Հոծ գծի հատումը եւ տրանսպորտային հանդիպակած միջոցների հոսքի դեմ շարժվելը՝ 30 միավոր:

«Կանգառն արգելված է» եւ «Կանգնեցնելն արգելված է» ճանապարհային նշանի պահանջի անտեսման, ինչպես նաեւ կանգառման եւ կանգնեցնելու մյուս պահանջների անտեսման համար՝ 5 միավոր:

Ոչ գաբարիտային տրանսպորտով, առանց իրավասու մարմինների հետ համաձայնության, ուղեւորների փոխադրման եւ բեռների տեղափոխման կարգի խախտման համար՝ 10 միավոր:

Տրանսպորտային միջոցով երեխաների փոխադրման անվտանգության կանոնների խախտման համար՝ 15 միավոր:

Բեռների եւ ուղեւորների փոխադրման կարգի խախտման՝ 25 միավոր:

Այն դեպքում, երբ բեռների եւ ուղեւորների փոխադրման կարգի խախտումը հանգեցնում է տրանսպորտային միջոցի, բեռի, ճանապարհի, ճանապարհային եւ այլ կառույցի, ինչպես նաեւ գույքի եւ մարդու մարմնի թեթեւ վնասվածքի՝ 30 միավոր:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*